

Եւստի պէտք է լինին: Այս մասին առ այժմ՝ այսքան՝ մի որեւէ անգամ առիթ չունենանք ժողովրդական կեանքի վերաբերեալ ռուսմասիրութեանց եւ թղթակցութեանց նիւթեր եւ հրահանգներ տալու:

Իսկ ինչ վերաբերում է գիտական քաժնին, կցանկայինք Մայր Աթոռի միաբաններին, եւ մշտական միւս աշխատակիցներից զատ՝ նաեւ դրսի քանասէրների մասնակցութիւնը տեսնել: Արդէն Մայր Աթոռի միաբան քանասէրների թիւը հետզհետէ քազմանում է, կարճ ժամանակից յետոյ յոյս ունինք, որ «Արարատ»-ը գիտական տեսակետից աւելի մեծ յառաջադիմութիւն ցոյց կտայ, քան մինչեւ այժմ: սակայն մեզ համար ցանկալի է, որքան կարելի է գիտական քազմական ուժեր հաւաքել «Արարատ»-ի շուրջը: Վեհափառ Հայրապետի հրամանով եւ տպարանական վարչութեան սիրալիր աջակցութեամբ մենք պատրաստ ենք միշտ իսկ աւելի քան ի վերջոյ զօրացնել զգիտական թիւը: Յատկապէս յաւելուածի համար կցանկայինք ամբողջական ռուսմասիրութիւններ ունենալ մի կամ մի երկու համարում տպագրելու համար: Հայրապետական սրբատառ Կոնդակը մեզ արտօնութիւն է տալիս՝ ի խըրախոյս հայ քանասէրների՝ զբոյլկներով արտատպել եւ նրանց յանձնել մի տպագրական թերթից աւելի ծաւալ ունեցող այն յօդուածները, որոնք գիտական արժէք կունենան: Մինչեւ այժմ՝ խուսափում էինք պատրաստելու մենք իսկ յօդուածներ հրատարակել «Արարատ»-ում, քայց այսուհետեւ Հայրապետական Կոնդակի համաձայն սիրով կընդունինք այդպիսիները: Յանկալի էր մանաւանդ Թ. Ժ. ԺԱ. դարու ձեռագիրների նկարագրութիւններ հնագրութեան եւ մանրանկարչութեան պատմութեան համար արժէք ունեցող պատկերներով, վանքերի նկարագրութիւններ, պատկերներով, յատակագծով եւ արձանագրութիւններով: գեղեցիկ խաչքարեր եւլն: Եթէ իրագործուին Հոգեւոր Տիրոջ այս քաղձանքներն, անշուշտ Արարատ»-ի ծախսը սովորականից շատ աւելի կմեծանայ, քայց Ս. Վեհի ցանկութիւնն է «Արարատ»-ը ծովացնել քստ ամենայնի ա-

ռանց ի նկատի ունենալու նիւթական ծախսերի ամուլը: Մայր Աթոռէ քաջալուսէ Եւստի: Սակայն մենք յոյս ունինք, որ Մայր Աթոռի հարազատները ամեն կերպով կաշխատեն տարածել «Արարատ»-ի քաժանորդագրութիւնը եւ դորանով մասամբ նպատուել նիւթական մեծ ծախսերի համար:

Վերջացնելով մեր թեթեւ նկատողութիւնները՝ նոր տարուայ շնորհաւորութիւնների հետ՝ սիրալիր ողջոյններ ենք ուղարկում բոլոր հեռաւոր աշխատակիցներին եւ յարգելի ընթերցողներին:

Գ. Վ. Յովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ.

Հոգեւոր Տիրոջ կարգադրութեամբ կազանդի առթիւ անցեալ գեկտ. 31-ի երեկոյին վեհարանի ընդունելութեան դահլիճում հացկերոյթ արուեցաւ Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութեան: Աղգիւս Վեհ. Հայրապետը բարեհաճել էր պատուել նոյն հացկերոյթը Իւր բարձր նախագահութեամբ: Առաջարկուեցան Վեհ. Հայրապետի Մ. Աթոռի միաբանութեան եւլն. կենաց բաժակներ և արտասանուեցան մի քանի ճառեր:

Թաջորդ օրը յունուարի 1-ին ամբողջ միաբանութիւնը ներկայացաւ Նորին Վեհափառութեան՝ նորա Ս. աջն առնելու և նոր տարի շնորհաւորելու համար: Միաբանութիւնից յետոյ նոյնպէս Գեորգ. Ծնմարանի ամբողջ ուսուցչական խումբը աշակերտաց հետ միասին պատիւ ունեցաւ ներկայանալու Ս. Վեհափառութեան ի շնորհաւորութիւնն. տարուայ:

Ծննդեան տօնը կատարուեց մեծ հանգիստաւորութեամբ. պատարագիչն էր տեղապահ Գեորգ. Արիստակէս արքեպիսկոպոս: Իսկ ջրօրհնաց տօնի հանդիսադիրը Նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետն էր: Նոյն օրը

Հոգեւոր Տէրը հաճեցաւ սեղանակից լինել Մ. Աթոռի միաբանութեան:

Ամսիս 15-ին Վեհ. Հայրապետի անուանակոչութեան առթիւ պատարագից յետոյ Մ. Տաճարում հայրապետական մաղթանք կատարուեց. Միաբանութիւնը և Ծեմարանի ուսուցչական խումբը շնորհ ունեցաւ Եկեղեցու մէջ համարուելու Նորին սրբութեան աջը: Կէս օրին հացկերոյթ տրուեցաւ վանքի սեղանատան մէջ. հացկերոյթին ներկայ էին Մ. Աթոռի միաբանութիւնը, Ծեմարանի ուսուցչական և աշակերտները երգեցիկ խումբը. ներկայ էին նաեւ բազմաթիւ հիւրեր Երեւանից և Վաղարշապատից: Եատկապէս Մ. Հայրապետի անուանակոչութեան առթիւ Մ. Աթոռ էին եկել և հացկերոյթին ներկայ եղան նաեւ Երեւանի փոխանորդ Դեր. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան և Թեմական զրպանոցի տեսուչ Արժ. Բենիկ վրդ. և հոգաբարձութեան երկու ներկայացուցիչներ: Արժ. Աշոտ վրդ. Շախեանց բացատրելով Ն. Վեհափառութեան մեծամեծ արժանիքները՝ բաժակ առաջարկեց Նորա կենաց երկարութեան համար: Արժ. Բենիկ վրդ. առաջարկեց ամբողջ միաբանութեան իսկ Դեր. Սուքիաս արքեպոս. Հայոց հոգեւոր հաստատութեանց վարիչների և ընդհանուր հոգեւորականութեան կենացը: Երգեցիկ խումբը Տ. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ երգեց պանչելի ներգաշնակութեամբ առաջարկուած կենացներին պատշաճ քառաձայն երգեր:

Դեր. Մակար եպոս. Բարխուդարեան Ն. Ս. Օծութեան առաջարկութեան համաձայն հաստատուած է Սինօղի անդամ: Իւր այս նոր պաշտօնի պատճառաւ Դեր. Մակար եպոս. հրաժարուելով աւագ լուսարարութեան պաշտօնից, Վեհ. Հայրապետը բարեհաճեց նրա տեղ Մ. Աթոռի աւագ լուսարար նշանակել Ժամօրհնող բարձր. Ղեկնող վարդապետին:

Դէորդ. Ծեմարանի տեսուչ բարձր. Կարապետ վարդապետ իւր տեսչական պաշտօնի

ծանրութեան պատճառաւ հրաժարուած լինելով Արարատի խմբագրութիւնից, Վեհ. Հայրապետը բարեհաճեց խմբագիր նշանակել բարձր. Դարեգին վրդ. Ծովսէփեանին:

Ժննդեան տօնի առթիւ Մ. Աթոռի միաբաններից Արժ. Պետրոս վրդ. ուղարկուեց Բայազիդ քարոզելու և մխիթարելու համար նոյն տեղի ժողովուրդը: Իսկ Տ. Դարեգին վարդ. Ծովսէփեան Հոգեւոր Տիրոջ հրամանով ջրօրհնաց հանդէս կատարեց Վաղարշապատի եկեղեցում և այդ առթիւ քարոզ խօսեց:

ԾԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Դեկտեմբերի վերջին Մ. Աթոռ ժամանեց Դէորդեան Ժառանգաւորաց Ծեմարանի լսարանական բաժնի յունարէնի ուսուցիչ պր. Յակոբ Մանանդեան, որ իւր ուսումն աւարտել է արտասահմանում և կրկին քննութիւն տուել Ռուսաստանում: Պարոնը տօններից յետոյ սկսել է արդէն իւր դասերը:

Ախալքալակի երկրաշարժից արկածեալների համար հանգանակութիւն կատարուելով Ծեմարանի ուսուցչական խմբի մէջ, զոյացած արդիւնքը յանձնուեցաւ տեղւոյս պր. Գաւառապետին:

Ս. Հայրապետի բարեհաճ կոնդակով Ծեմարանի լսարանական բաժնի նախկին ուսուցիչ պր. Ծովհանէս Ծովհանիսեանը Ծեմարանի տեսչի օգնական նշանակուեց:

Վեհ. Հայրապետի անուանակոչութեան տօնի երեկոյին Ծեմարանի հանդիսարանում տեղի ունեցաւ մի զրական—երաժշտական երեկոյթ, որի ներկայ էին Դեր. Սուքիաս արքեպոս, Սինօղի նախանդամ Դեր. Արիստակէս արքեպիսկոպոս, Երեւանի Թեմական զպրանոցի տեսուչ Արժ. Բենիկ վարդ. և Մայր Աթոռի միաբանութիւնից շատեր և Ծեմարանի ուսուցչական խումբը: Ծեմարանի Տեսուչ բարձր. Կարապետ վարդապետի բացման ճառից յետոյ